Այս շրջանակներում ցանկալի կլիներ ՀՀ բնապահպանության ու կրթության և գիտության նախարարությունների համագործակցությամբ ստեղծել երիտասարդական հանձնախումբ, որը կզբաղվեր բնապահպանական ռազմավարության իրականացմանն ուղղված հարցերով: Մասնավորապես՝

- երիտասարդների դերի բարձրացմամբ բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում: Օրինակ, բուհերում թափոնների տեսակավորում, թղթի հավաքում՝ որպես երկրորդային հումք օգտագործելու նպատակով: Գործընթացը նպատակահարմար է իրականացնել Ուսանողական խորհուրդների աջակցությամբ,
- միջազգային ծրագրերի իրականացում օտարերկրյա նմանատիպ երիտասարդական կառույցների հետ համատեղ,
- բնակչությանը՝ մասնավորապես երիտասարդությանը ապահովել համապատասխան տեղեկատվությամբ՝ էլեկտրոնային կայքի ստեղծմամբ:

Բնապահպանական ռազմավարությունը պետք է ներառի նաև էկոկրթությունը: Կարելի է էկոլոգիային վերաբերող էլեկտրոնային խաղերի միջոցով դաստիարակել աճող սերնդի մեջ բնության նկատմամբ սեր, այն պահպանելու և գերշահագործումից «փրկելու» ձգտումներ: Սա աշակերտների, ուսանողների, ինչպես նաև մեծահասակների մեջ կսերմանի սեր բնության հանդեպ: Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների բացակայության դեպքում կարելի է դիմել դոնոր կազմակերպություններին՝ աջակցության համար: Էլեկտրոնային խաղը նպատակահարմար է կիրառել դպրոցական և/կամ բուհական ուսումնական ծրագրերում:

Հայաստանը բնութագրվում է մարդկային զարգացման բարձր մակարդակով և այդ առումով գերազանցում է նմանատիպ տնտեսական զարգացում ունեցող երկրների մեծ մասին: Դա խիստ կարևոր նախապայման է, քանի որ ժողովուրդն ինքն է ձգտում հասնել նշանակալի առաջընթացի և ցանկանում է ունենալ մարդկային զարգացման իր մակարդակին ավելի հարիր տնտեսական իրավիճակ: ՀՀ-ում իրականացվող էկոլոգիական քաղաքականության շնորհիվ միջազգային հանրության կողմից ցուցաբերվող աջակցությունը նույնպես կարևոր առավելություն է: Իսկ կառավարության խնդիրն է ստեղծել լավագույն պայմաններ այդ հարաբերական առավելությունների լիարժեք օգտագործման և դրված նպատակներին հասնելու համար:

ՖԵԼԻՔՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, աշխ.գ.թ.
ԴԻԱՆՆԱ ՍԱՐԱՖՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի աշխատակից

ՀՀ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման համար հսկայական նշանակություն ունի ընդերքից օգտակար հանածոների կորզումը, որոնք հանդիսանում են տվյալ երկրի անկախության, ազգային հարստության և հզորության հիմնական չափանիշները:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնի են շուրջ 60 տեսակի օգտակար հանածոների արդյունաբերական պաշարներով 565 հանքավայր, որոնց տնտեսական համախառն արժեքն ընդերքում գնահատվում է ավելի քան 120 մլրդ. ԱՄՆ դոլար:

«Բնության հարստությունները մեծ են, սակայն անսահման չեն: Բնության գանձերի խելացի շահագործումը, բազմապատկելով նրա ռեսուրսները, հաշվի առնելով հասարակության բոլոր պահանջները՝ գիտական խոշորագույն հիմնահարց է: Այդ հիմնահարցի կարևորագույն բաղկացուցիչ մասը բնության վերափոխման և շահագործման նախագծերի համակցումն է նրա պահպանության հետ»[1]:

1995թ. հանրապետությունում իրականացվեց վարչատարածքային բարեփոխում, որն անմիջական ազդեցություն ունեցավ երկրում իրականացվող տարածքային քաղաքականության.բովանդակության և մոտեցումների վրա: Վարչատարածքային միավորների թիվը 37-ից կրճատվեց՝ հասնելով 11-ի (այդ թվում՝ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով), ընդլայնվեցին վերջիններիս իրավունքները, մեծացավ յուրաքանչյուր միավորի բնառեսուրսային և ժողովրդագրական ներուժը, հետևապես նաև տնտեսական զարգացման հնարավորությունները:

Յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման, արտադրողական ուժերի տեղաբաշխման կարևոր դեր խաղացող նախապայմանն են նրա տարածքի չափերը, մակերևույթի կառուցվածքը, կլիմայական պայմանների առանձնահատկությունները: Արդյունաբերության զարգացման համար, այդ նախապայմաններից բացի, շատ խոշոր դեր խաղացող նախադրյալ և գործոն է հումքային ռեսուրսների առկայությունը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության անցումը կենտրոնացված պլանավորումից դեպի շուկայական տնտեսական հարաբերություններ կոչված էր կարճատև, միջին և երկարատև հեռանկարում բարելավելու երկրի ոչ միայն տնտեսական վիճակը, այլև նպաստելու նրա բնական միջավայրի էկոլոգիական իրավիճակի կայունացմանը:

Պետական բնապահպանական քաղաքականության նպատակն է ապահովել քաղաքացիների սահմանադրական իրավունքը բարենպաստ շրջակա միջավայր, հաստատուն բնապահպանական հավասարակշռության ապահովում: Այդ նպատակներին հասնելու համար մոտ ապագայում կբարելավվի տարածաշրջանների

---

[1]М.П.Толстой "Человек – преоткрыватель природы". МосквиНедра 1984г. стр. 41.

շրջակա միջավայրի բնապահպանական ծայրահեղ վիճակը, միաժամանակ պահպանելով տարածաշրջանների բնապահպանական կայունությունը:

Այսօր գործարար կյանքը և դրանից բխող տնտեսական վերլուծության անհրաժեշտությունը զարգացում է ապրում: Ներկայումս մեծ նշանակություն է ստանում, այսպես կոչված, «չվերականգնվող» բնական բարիքների որակի հիմնախնդիրը, որոնց թվում են մթնոլորտը, գետերի, լճերի և ծովերի ափամերձ ջրերը, լանդշաֆտը և հողածածկը, բուսականությունը և այլն, որոնց բնական հատկությունները «նախանշում» են առավել զգալի նյութական սահմանափակումները: Դրանք պետք է իրականացվեն որոշակի տնտեսական ձևերի օգնությամբ, ապահովելով միասնական ամբողջական պահանջարկ համապատասխան բնական բարիքների գծով: Բնական միջավայրի այնպիսի յուրահատկությունները, ինչպիսիք են նրա կարևոր տարրերի առանձին մասերի անբաժանելիությունը, կենսոլորտի հետ դրանց փոխադարձ կապը և ամբողջականությունը, էականորեն տարբերում են դրանց սովորական ապրանքային բարիքներից, բավարարելով մարդկանց պահանջմունքներն ի պատասխան նրանց վճարունակ պահանջարկի:

Հայտնի է, որ երբ սոցիալ-տնտեսական համակարգում նկատվում է հավասարակշռվածության խախտում, ձևավորվում են փոխհատուցման որոշակի մեխանիզմներ: Մինչդեռ ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ տեղական իշխանություններն ի զորու չեն կանգնեցնելու գերատեսչությունների ավերածությունները, բայց կյանքը ստիպում է հասարակությանը դիմել ակտիվ գործողությունների՝ շրջակա միջավայրի պահպանման համար: Այդ շարժումը ենթարկվելով «ճոճանակի սկզբունքին», շատ դեպքերում ուռճացվում է և, փաստորեն, դեմ է ցանկացած օբյեկտների շինարարությանը, նույնիսկ մշակութային ոլորտն ապահովող օբյեկտների նկատմամբ, որն էլ անմիջական ազդեցությունն է ունենում «կանաչների» շարժման վրա, հեղինակազրկելով այն: Հետևաբար, ենթադրվում է, որ էկոլոգիական պահանջներին համապատասխանող օբյեկտների շահագործումից չհիմնավորված հրաժարումը հսկայական վնասներ է բերում հասարակությանը:

Վերը շարադրվածը միանշանակ վերաբերում է նաև Հայաստանի հյուսիսային մարզերին (Լոռի, Շիրակ,Տավուշ):

ՀՀ հյուսիսային մարզերից՝ Լոռու մարզը կազմավորվել է 1996թ.-ին՝ Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի նախկին շրջանների և հանրապետական ենթակայության Վանաձոր քաղաքի հիման վրա:

Մարզի տարածքը 3789 քառ. կմ է, այն կազմում է ՀՀ տարածքի 12.7%-ը և տարածքի տեսակետից այս մարզը զիջում է միայն Գեղարքունիքի և Սյունիքի մարզերին:

Լոռու մարզն ունի նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք: Բավական է ասել, որ մարզի տարածքով է անցնում դեպի Վրաստան և Վրաստանով դեպի Եվրոպայի երկրներ ու Ռուսաստանի Դաշնություն տանող և հանրապետության համար վճռական դեր խաղացող երկաթուղին: Մարզի կենտրոնական մասով են անցնում Հայաստանի Հանրապետության երկու գլխավոր ավտոմայրուղիները, որոնցով հյուսիսային ուղղությամբ այն ելք ունի դեպի Վրաստան և Սևծովյան նավահանգիստներ: Հանդիսանալով սահմանամերձ մարզ՝ Լոռին տնտեսական զարգացման առումով ունի մեծ հնարավորություններ (հատկապես արտաքին առևտրի): Վրաստանի հետ ունեցած նրա սահմանը կազմում է 110կմ: ՀՀ, այդ թվում նաև Լոռու մարզի տնտեսության զարգացման վրա բացասական ազդեցություն ունեցավ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից երկարատև շարունակական տրանսպորտային շրջափակումը:

Չնայած այն հանգամանքին, որ Լոռու մարզի տարածքը, հատկապես հանքային ռեսուրսների առումով, վերջին ժամանակաշրջանում չի ենթարկվել երկրաբանական բազմակողմանի գիտական ուսումնասիրության, այնուամենայնիվ խորհրդային շրջանում լայնածավալ հետազոտությունների (ֆիզիկաաշխարհագրական, գեոմորֆոլոգիական ու երկրաբանական, ջրաբանական, հողագիտական) արդյունքները, պատմական փաստերը և տարբեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում կան բազմազան չօգտագործվող կամ անբավարար օգտագործվող ռեսուրսներ, որոնց մեծ մասը կարող են ունենալ գործնական, արդյունաբերական խոշոր նշանակություն:

Մասնավորապես, Լոռին բնական ռեսուրսների պաշարներով հանրապետությունում զբաղեցնում է 2-րդ տեղը՝ զիջելով միայն Սյունիքի մարզին: Այստեղ են կենտրոնացված հանրապետության ընդերքի ռեսուրսների 15.2%-ը[1]: Ըստ որում, այս մարզում են գտնվում հանրապետության մետաղային ռեսուրսների 28.3%-ը, շինանյութերի հումքի՝ 4.9%-ը, հանքային ջրերի՝ 3.7%-ը: Տարածաշրջանը հանրապետության կտրվածքով առաջին տեղն է գրավում կապարի և ցինկի ռեսուրսներով, որոնք կազմում են համապատասխանաբար՝ 88.7% և 52.5%: Իսկ պղնձի պաշարները կազմում են հանրապետական պաշարների 28.7, մոլիբդենինը՝ 12.4, արծաթինը՝ 10.6, ոսկունը՝ 5.4%:

Մարզը հարուստ է նաև շինանյութերի հումքատեսակներով: Մասնավորապես, այստեղ են գտնվում հանքային ներկերի ընդհանուր պաշարների 82.5%-ը, տուֆերի՝ 21.5%-ը, քվարցների՝ 32%-ը, գրանիտների՝ 9.4%-ը, հրաբխային խարամների՝ 4.6%-ը: Կան նաև բազալտի, ամենեզիտաբազալտի, տուֆոազաքարերի զգալի պաշարներ:

Մարզի բնական ռեսուրսների համալիրում աչքի ընկնող տեղ են գրավում նաև Դեբեդ գետի ջրաէներգետիկ հարուստ ռեսուրսները:

Անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության համար հրամայական պահանջ է սեփական բոլոր տեսակի ռեսուրսների, այդ թվում առաջին հերթին նաև հանքային ռեսուրսների գիտականորեն ուսումնասիրման, դրանց ռացիոնալ օգտագործման ուղղությունների և հիմնահարցերի մշակման անհրաժեշտությունը: Ընդ որում, խստագույնս հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության խնդիրները:

---

[1] Ա.Ավագյան «Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը», Երևան, 2000թ., էջ 52:

Լոռու մարզը բնական ռեսուրսների բազմազանությամբ, որակական, քանակական հատկանիշներով, արդյունաբերության զարգացման ներուժի հնարավորություններով, տրանսպորտային նպաստավոր պայմաններով, ինչպես նաև արդեն իսկ ձևավորված բարձրորակ աշխատանքային ռեսուրսներով առաջնակարգ տեղ ունի հանրապետության վարչատարածքային միավորների համակարգում, ապա այս մարզի արդյունաբերության զարգացման և տարածքային կազմակերպման (տեղաբաշխման) խնդիրների հետազոտությունը, գնահատումը ՀՀ ամբողջ տնտեսության զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունի:

Անապատացման գործընթացները ՀՀ-ում կախված վայրերից ունեն դարերի պատմություն: Այն առավել սրվել և ուժեղացել է մեր օրերում՝ սոցիալ-տնտեսական գործոնների, սխալ բնօգտագործման և բնապահպանական միջոցառումների անբավարար իրականացման պատճառով: Կանգ առնենք Հայաստանի հյուսիսային երեք մարզերից (Լոռի, Շիրակ, Տավուշ) հաջորդի՝ Շիրակի, մարզի վրա: Այն ընդգրկում է Վերին Ախուրյանի գոգավորությունը, Շիրակի դաշտը, Արագածի հյուսիսային լանջերը: Շիրակն ունի ցամաքային կլիմա: Օգոստոսի երկրորդ կեսը չորային է, բարձր լեռնային հատվածներում աղբյուրները չորանում են և անասնապահները ստիպված են լինում լքել մարգագետինները ջրի պակասության հետևանքով:

Շիրակի հարավ-արևմտյան մասում լանդշաֆտը չոր տափաստան է, դաշտի հյուսիսում՝ տափաստանային սևահողերով, իսկ Աշոցքում՝ մարգագետնային տափաստան է: 2200-2300մ-ից բարձր մերձալպյան մարգագետիններն են՝ մարգագետնային սևահողերով, ավելի բարձր՝ լեռնամարգագետնային լանդշաֆտներ են:

Շիրակի դաշտում անհիշելի ժամանակներից մշակում են հացահատիկ և բանջարանոցային կուլտուրաներ: Շրջապատի լեռներում նկատելի է հողի էրոզիան և լեռնալանջերի ինտենսիվ տեղատարում: Շիրակի լեռնաշղթայի որոշ հատվածներում մարդու ներգործությամբ լեռնալանջերի հողաբուսական ծածկի վերացում է նկատվում:

Շիրակում նկատվում են անապատացման գործընթացներ, որոնք նպաստում են ոչ միայն տնտեսական ոլորտների զարգացման խոչընդոտմանն ու անկմանը, այլև բացասական ազդեցություն ունեն քաղաքական, սոցիալական, մշակութային և բնապահպանական ոլորտների վրա, արագացնելով առանձին բացասական գործոնների ազդեցությունը և սրելով առկա սոցիալական, քաղաքական, տնտեսական ու բնապահպանական հիմնախնդիրները:

Մյուս կողմից, բնապահպանական տեսանկյունից տնտեսության ոչ հավասարակշռված զարգացումը կամ ոչ արդյունավետ տնտեսվարումը բացասական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա, վատթարացնում տիրող բնապահպանական իրավիճակը և վերջնական արդյունքում արագացնում անապատացման գործընթացները: Հետևաբար, անապատացման գործընթացների և տնտեսության վիճակի փոխհարաբերությունները երկկողմանի են, փոխշաղկապված և շատ հաճախ վերջինիս ազդեցությունն է ավելի գերակշռող:

Հաջորդ՝ Տավուշի մարզը, հանրապետության մյուս մարզերի նման ստեղծվել է ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ Ազգային Ժողովի որոշմամբ, իսկ մարզպետարանն իր գործունեությունը սկսել է 1996թ. փետրվարի 20-ից: Մարզը համընկնում է ՀԽՍՀ կառավարության 1977թ.-ին հանրապետության սոցիալ-տնտեսական շրջանացման սխեմայով սահմանված Աղստևի (հյուսիս-արևելյան) տնտեսական շրջանին: Ընդգրկում է նախկին Իջևանի, Տավուշի (Շամշադինի), Նոյեմբերյանի շրջանները և առողջարանային Դիլիջան քաղաքը: Հարավ-արևելքում ու հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին և Վրաստանի Հանրապետությանը, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանի Հանրապետությանը: ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 400կմ չափազանց բարդ մի հատված, որից 352-ը՝ Ադրբեջանի հետ:

Մարզը զբաղեցնում է 2710քառ.կմ մակերես: Մարզը ունի 58 գյուղական և 4 քաղաքային (Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան) համայնք: Մարզի ամենախոշոր գետը դեպի հյուսիս-արևելք հոսող Աղստև գետն է: Ծովի մակերևույթի համեմատ ամենացածր կետը (ինչպես նաև հանրապետության ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ +380մ: Ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մոիլդուզ լեռն է՝ 2993մ:

Տավուշի մարզը տարածվում է ՀՀ հյուսիս-արևելքում, Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա, որը կազմված է Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներից: Գտնվում է հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Գետերը պատկանում են Կասպից ծովից (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Նշանակալի միակ բնական լիճը Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: 1970-1980թթ. կառուցվել են Ձողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի ջրամբարները: Մարզի 271 հազ.հա մակերեսից գյուղատնտեսությանը ծառայում է 96607-ը: Իսկ մակերեսի 48%-ը կամ 134000 հա զբաղեցնում են խառն անտառները:

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, մարմարը, տուֆը, ֆելզիտը: Աղստև գետի հարուստ է հանքային բուժիչ ջրերով, որոնք նաև շշալցվում են: Մարզի անտառոտ տարածքներն աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության վիճակի պահպանության, հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին: Էներգետիկ ճգնաժամի տարիներին հաճախ ոչ հաշվենկատ ձևով հատված անտառի վերականգնման նպատակով խնդիր է դրվել ներդրումների տարբեր աղբյուրների շնորհիվ մոտ ապագայում տարեկան հիմնել 2000 հա նոր անտառ:

Քանի որ այժմ երկրի տնտեսական, սոցիալական զարգացման խնդիրների լուծման բնագավառում խոշոր արտոնություններ են տրված մարզային իշխանություններին, ապա նշված՝ Լոռու, Շիրակի և Տավուշի (ինչու չէ, նաև մյուս մարզերի) մարզպետարանները պետք է ակտիվացնեն իրենց տնտեսական գործունեությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման, համատեղ ձեռնարկությունների, արդյունաբերական ցուցահանդեսների ու տոնավաճառների կազմակերպման, առաջավոր փորձի փոխանակման և արտաքին տնտեսական կապերի այլ բնագավառներում:

Իսկ այս խնդիրների լուծման և արդյունաբերության զարգացման համար նշված մարզերի բազմակողմանի հնարավորությունների օգտագործումը կարող է իրականանալ առաջին հերթին կառավարության ակտիվ աջակցությամբ: Ըստ որում, մարզերի ռեսուրսային ներուժի ամբողջական օգտագործումը, արդյունաբերության ժամանակակից պահանջներին համապատասխանող ենթաճյուղերի զարգացումը, այդ բնագավառում միջազգային առաջավոր փորձի կիրառումը մեծ ներդրում կլինի ամբողջ հանրապետության տնտեսական զարգացման և միջազգային ինտեգրացման գործում:

ՀՐԱՉԻԿ ՋԱՎԱԴՅԱՆ
ՀՊԱՀ ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ
ՄԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղատնտեսության ոլորտում իրականացված տնտեսական բարեփոխումների արդյունքում ի հայտ եկան բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց բացասական ազդեցությունը ունեցան գյուղատնտեսության զարգացման վրա:

Արմավիրի մարզը ևս զերծ չմնաց կառուցվածքային տեղաշարժերի բացասական հետևանքներից: Հոդվածի հիմնական նպատակն է վեր հանել այն խնդիրները, որոնք ներկայումս խոչընդոտում են Արմավիրի մարզի գյուղատնտեսության զարգացմանը, որոնց վերացումը կամ ազդեցության նվազեցումը հնարավորություն կտա ապահովել տնտեսական զարգացման ավելի բարձր տեմպեր և տնտեսական բարձր արդյունավետություն:

ՀՀ Արմավիրի մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության զարգացման համար: Մարզը ներկայումս հանդիսանում է ՀՀ առաջատար մարզերից մեկը, և նշանակալի դեր ունի տնտեսության զարգացման, մասնավորապես, ագրարային ոլորտի զարգացման գործում:

Աղյուսակ 1.

Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի կառուցվածքը (2006թ.)*

Արտադրանքների անվանումը	Արտադրանքի քանակը (տոննա)	Իրացման միջին գինը, տ/ հազ. դրամ	ՀԱԱ-ը (մլն. դրամ)	ՀԱԱ-ի կառուցվածքը (%)
1. Հացահատիկ	36415	85	3095.3	3.7
2. Կարտոֆիլ	47060	120	5647.2	6.8
3. Բանջարեղեն	348852	50	17442.6	20.9
4.Բոստանային մշակաբույսեր	98077	80	7846.2	9.4
5. Բազմամյա խոտ	110737	31	3428.7	4.1
6. Պտուղ	84724	120	10166.9	12.2
7. Խաղող	98839	170	16802.6	20.1
Ընդամենը բուսաբուծություն	×	×	64429.4	77.2
8. Միս	11100	1120	12432.0	14.9
9. Կաթ	40200	120	4824.0	5.8
10. Բուրդ	87	800	69.6	0.1
11. Ձու (մլն հատ)	34,9	50	1745.0	2.1
Ընդամենը անասնաբուծություն	×	×	19070.6	22.8
Ընդամենը գյուղատնտեսություն	×	×	83500.0	100

* Աղյուսակը կազմված է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային գործակալության տվյալների հիման վրա

Մարզի գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Ըստ 2006թ. տվյալների, մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի 77.2%-ը (64429.4 մլն. դրամ) ստացվել է բուսաբուծությունից: Բուսաբուծական արտադրանքի արժեքի կառուցվածքում գերակշիռ տեղ ունեն բանջարեղենի, խաղողի, պտուղների, բոստանային մշակաբույսերի արտադրությունը, որոնց տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 27.1%, 26.1%, 15.8% և 12.2%: Անասնաբուծական արտադրանքներից զգալի տեսակարար կշիռ ունեն մսի արտադրությունը՝ 14.9% կամ անասնաբուծական արտադրանքի 65.2%-ը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ, 2004թվականի համեմատ 2006 թվականին 9.4 %-ով կամ 1178 հեկտարով ավելացել են բազմամյա տնկարկների տարածությունները, որը կատարվել է վարելահողերի (այդ թվում՝ հացահատիկային մշակաբույսերի) կրճատման հաշվին:

Միևնույն ժամանակահատվածում խաղողի այգիների տարածություններն ավելացել են 489 հեկտարով կամ 9.1%-ով, իսկ պտղատու այգիները՝ 689 հեկտարով կամ 9.6%-ով: Բազմամյա տնկարկների տարածությունների ավելացումը հիմնականում պայմանավորված է խաղողի և պտուղների իրացման գների բարձրաց-